

ԿԱՐԾԻՔ

Անի Արթուրի Աղաբաբյանի «Բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին քառորդ դարում, 1999-2023 թթ., պետական եկամուտներն ավելացել են 14.5 անգամ, ծախսերը՝ 13 անգամ: Չնայած այս տպավորիչ աճին, կարևորն այն է, թե ինչ արդյունավետությամբ են կատարվել պետական ծախսերը, որքանով են դրանք նպաստել ինստիտուցիոնալ մյուս հատվածներում դրական տեղաշարժերին, տնտեսության կառուցվածքային որակական փոփոխություններին:

Սոցիալական և տնտեսական ոլորտների զարգացման համար հատկացվող պետական և համայնքային բյուջեների միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնախնդրի լուծումը տևական ժամանակ եղել և մնում է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բյուջետային համակարգի մշտական բարեփոխման և բյուջետային գործընթացի հիմնական նպատակներից: Մինչդեռ դեռևս չի արմատավորվել ծախսերի վերահսկման գաղափարախոսությունից դեպի արդյունքների կառավարման գաղափարախոսություն անցումը՝ պետական և համայնքային ֆինանսների կառավարման օպտիմալ ապակենտրոնացման միջոցով:

Տնտեսական և ֆինանսական քաղաքականության ոլորտում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կարևոր խնդիրը սոցիալական հիմնական ծառայությունների հասանելիության և անվճար հիմունքերով ապահովումն է, քաղաքացիների սահմանադրական իրավունքների գործնական իրարացումը. կրթություն, մշակույթ, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն և սոցիալական այլ ոլորտներ: Այս խնդրի լուծումը ներառում է բյուջետային գործընթացում կառավարման նոր մեթոդների, լուծումների և մոտեցումների ներդրում: Բյուջետային գործընթացում առանցքային են պետական և համայնքային ծառայությունների կազմակերպման համակարգում կառավարչական մոտեցումների զարգացմամբ՝ բյուջետային ծախսերի պլանավորման արդյունավետության բարձրացման, պլանավորման գործիքակազմի, բյուջեների հաշվառման և հաշվետվողականության կատարելագործման հարցերը: Թեպետ տևական ժամանակ իրականացված օրենսդրական մի շարք փոփոխություններ վերաբերել են սոցիալական և տնտեսական ոլորտներում բյուջետային ծախսերի պլանավորման համակարգի զարգացման մոտեցումներին և ուղղություններին, այնուամենայնիվ, գոյություն ունեն մի շարք հիմնախնդիրներ, որոնց հանդիպում են գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման

մարմինները, ոլորտային գերատեսչությունները՝ ֆինանսական պլանավորման մոդելների իրացման ժամանակ:

ՀՀ բյուջետային հարաբերությունների զարգացման ժամանակակից պայմաններում հրատապ խնդիր է բյուջետային ծախսերի պլանավորման համակարգում կառավարման գործիքակազմի անորոշության հաղթահարումը, ինչը, իր հերթին, պահանջում է սոցիալական և տնտեսական ոլորտներում բյուջեների ծախսերի պլանավորման, հաշվառման քանակական և որակական մեթոդների բնագավառում գիտելիքի զարգացումը: Սոցիալական ոլորտներում ծախսերի գնահատման և համայնքային ծառայությունների ֆինանսավորման գնահատման բնագավառի խնդիրները պահանջում են նոր մոտեցումներ: Պահանջվում են ծրագրանպատակային սկզբունքի վրա հիմնված սոցիալական ծառայությունների մատուցման համար հատկացվող միջոցների բաշխման գործունե կառուցակարգեր և մեթոդներ՝ բյուջեի միջնաժամկետ պլանավորման շրջանակներում արդյունքին կողմնորոշված բյուջետավորման կարևորմամբ:

Այսպիսով, ՀՀ-ում պետական սոցիալական ծառայությունների ֆինանսավորման հետ կապված բյուջետային քաղաքականության մշակման ներկա փուլը պահանջում է պետական և համայնքային ֆինանսների կառավարման մեթոդների հետագա կատարելագործում և առկա գիտելիքի ու բյուջետային ծախսերի պլանավորման համակարգի կառավարման մոտեցումների համակարգում, որոնք ուղղված կլինեն սոցիալական ոլորտի զարգացմանը:

Այս համատեքստում՝ ընտրված թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, այն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակ է սահմանվել՝ ՀՀ բյուջետային քաղաքականության կատարելագործմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումը: Սահմանված նպատակին հասնելու համար՝ հեղինակը ձևակերպել է հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել բյուջեի սոցիալ-տնտեսական բովանդակությունը և դերը տնտեսության պետական կարգավորման գործընթացում.
- ուսումնասիրել բյուջետային քաղաքականության էությունն հիմնական խնդիրները, վերլուծել բյուջետային ծախսերի տեսական հիմքերը և դրանց արդյունավետության ապահովման հիմնահարցերը.
- վերլուծել ՀՀ բյուջետային քաղաքականության օրենսդրարավական և կազմակերպական հիմքերը, բացահայտել դրա իրականացման հիմնախնդիրները և դրա արդյունավետության վրա ազդող գործոնները.
- ուսումնասիրել բյուջետային ծախսերի հիմնավորվածության ապահովման հիմնախնդիրները.

Հետազոտության արդյունքում ստացված գիտելիքը կօգտագործվի ՀՀ բյուջետային քաղաքականության կատարելագործմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակման գործում:

- մշակել բյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅՅԹԸ

Հեղինակը, որպես հետազոտությամբ ստացված արդյունքների նորույթ՝ պաշտպանության է ներկայացրել հետևյալ դրույթները.

1. բյուջետային համակարգի գործունեությունը կանոնակարգող օրենսդրական դաշտի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են առկա բացթողումները և թերությունները, ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված բյուջետային քաղաքականության կատարելագործմանը.
2. բյուջետային ծախսերի տեսական հիմքերի համակողմանի վերլուծության արդյունքում ներկայացվել են բյուջետային ծախսերի արդյունավետության ապահովման հիմնական սկզբունքները և գնահատման մեթոդաբանական հիմքերը.
3. բյուջետային քաղաքականության կատարելագործման նպատակով առաջարկվել է բյուջետային ծախսերի հիմնավորվածությունը դիտարկել որպես բյուջետային համակարգի հիմքում դրվող սկզբունք, տրվել է դրա սահմանումը և ներկայացվել են բյուջետային ծախսերի հիմնավորվածության ապահովման քայլերի հաջորդականությունը.
4. բյուջետային ցուցանիշների և իրականացված քաղաքականության վերլուծության հիման վրա մշակվել են բյուջետային քաղաքականության կատարելագործմանն ուղղված մոտեցումներ՝ հիմնված բյուջետային ծախսերի արդյունավետության ռացիոնալության և հիմնավորվածության վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից (118 աղբյուր):

Աշխատանքի ներածական մասում ատենախոսն անդրադարձել է թեմայի արդիականությանը, սահմանել է հետազոտության նպատակը և ձևակերպել խնդիրները, հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացրել է հետազոտության մեթոդաբանությունը և պաշտպանության ներկայացվող նորույթը: Ատենախոսության կառուցվածքը համահունչ է հետազոտության նպատակից բխող խնդիրներին:

Առաջին՝ «Բյուջետային քաղաքականության տեսական և մեթոդական հիմքերը» գլխում հեղինակը, հիմնվելով հայրենական և արտասահմանյան հեղինակավոր աղբյուրների վրա, ուսումնասիրում է պետական բյուջեի էությանը և տնտեսության պետական կարգավորման դրա դերին, բյուջետային քաղաքականությանը և պետական ծախսերի արդյունավետությանն առնչվող հարցերը, կատարել գիտագործնական հետաքրքրություն ներկայացնող եզրահանգումներ: Մասնավորապես, ատենախոսն իրավացիորեն նշում է, որ «հատկապես զարգացող երկրներում [պետական բյուջեն] հանդես է գալիս որպես սոցիալ-տնտեսական

գործընթացների կարգավորման հիմնական գործիք» [էջ 17], միաժամանակ նկատելով, որ «տնտեսության պետական կարգավորման գործընթացում ունեցած իր կարևոր դերակատարությամբ հանդերձ, բյուջետային քաղաքականությունը կարող է ցանկալի արդյունքներ ապահովել միայն որոշակի նախադրյալների ապահովման պարագայում», դրանց շարքում կարևորելով բյուջետային ծախսերի արդյունավետության ապահովումը [էջ 28]:

Երկրորդ՝ «Բյուջետային քաղաքականության իրականացման հիմնախնդիրները ՀՀ-ում» գլխում վերլուծվում են բյուջետային քաղաքականության օրենսդրահիրավական ապահովվածության հիմքերը, բյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները և ծախսերը, ներկայացվում բյուջետային քաղաքականության հիմնախնդիրները: Բյուջետային քաղաքականության օրենսդրահիրավական ապահովվածության հիմքերին անդրադառնալիս, ատենախոսը հատկապես կարևորել է Հայաստանում ծրագրահենք բյուջետավորման օրենսդրական հիմքերի ստեղծումը և դրա ներդրումը 2019 թվականից [էջ 47], նկատելով, որ դա ենթադրում է «ծախսերի նկատմամբ վերահսկողությունից անցում արդյունքների արդյունավետ կառավարմանը» [էջ 47]: Միաժամանակ, ատենախոսը նշում է, որ «չնայած ծրագրային բյուջետավորման օրենսդրական հիմքերի առկայությանն ու այդ ուղղությամբ որոշակի աշխատանքների իրականացմանը, այդուհանդերձ, դրա լիարժեք գործունեությունը դեռևս հեռու է ցանկալի մակարդակից» [էջ 48]: Ատենախոսը եզրակացրել է, որ «ՀՀ օրենսդրությամբ սահմանված են այն հիմնարար սկզբունքները և իրավական հիմքերը, որոնք անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման են բյուջետային համակարգի արդյունավետ գործունեության համար»՝ կարևորելով հատկապես բյուջետային համակարգի հիմքում դրված սկզբունքների գործնական կիրառությունն ապահովող կառուցակարգերի գործադրումը [էջ 49]:

Այնուհետև, մանրազնին վերլուծության է են ենթարկվել 2012-2023 թթ. պետական ծախսերի դինամիկան և կառուցվածքը՝ ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգումների [էջ 55-59], բացահայտվել են որոշ օրինաչափություններ, կատարվել են ըստ պետական ծախսերի կառուցվածքի և մակարդակի՝ մի կողմից ՀՀ-ի, իսկ մյուս կողմից՝ զարգացող և զարգացած ընտրված երկրների խմբի միջև: Բացահայտվել է, որ ըստ ծախսերի մակարդակի և ծախսային ուղղությունների՝ Հայաստանի ցուցանիշները նշանակալի ցածր են, ինչը, ըստ ատենախոսի, պայմանավորված է եկամտային սահմանափակ հնարավորություններով [էջ 61]:

Երկրորդ գլուխը եզրափակվում է բյուջետավորման քաղաքականության հիմնախնդիրների նույնականացմամբ, որոնք, ատենախոսի կարծիքով, պայմանավորված են օրենսդրահիրավական, ինստիտուցիոնալ և ընթացակարգային [էջ 62]: Ատենախոսն այդպիսի հիմնախնդիրների շարքին է դասել՝

- 1) ծախսերի արդյունավետությունը և դրա գնահատման մեթոդաբանության բացակայությունը.

- 2) օրենսդրության մեջ բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման համար պաշտոնատար անձանց պատասխանատվությանը, ինչպես նաև բյուջետային միջոցների խնայողաբար և արդյունավետ օգտագործման խթաններին վերաբերող նորմերի բացակայությունը.
- 3) բյուջետային պլանավորման որակը.
- 4) հարկային եկամուտների մանրամասնեցված բացվածքի բացակայությունը.
- 5) ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման արդյունավետության ցածր մակարդակը.
- 6) բյուջետային վերահսկողության կարգավորումների ցածր արդյունավետությունը.
- 7) բյուջետային և ռազմավարական պլանավորման համակարգերի միջև փոխկապվածության բացակայությունը:

Ատենախոսի կողմից նույնականացված հիմնախնդիրների շրջանակը, ակնհայտորեն, կարող է ունենալ գործնական նշանակություն:

Երրորդ՝ «Բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղղությունները <<-ում» գլխում հեղինակն անդրադառնում է բյուջետային ծախսերի պլանավորման կատարելագործման և դրանց հիմնավորվածության ուղիներին, առաջարկում է բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման մոտեցումներ: Ատենախոսը, իրավացիորեն նշելով, որ «բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սոցիալ-տնտեսական բովանդակությունը պայմանավորված է բյուջետային ծախսերի երկակի բնույթով, որոնք, մի կողմից, ուղղված են բյուջետային միջոցներ ստացող սուբյեկտների գործունեության ֆինանսական ապահովմանը, իսկ մյուս կողմից՝ սոցիալ-տնտեսական զարգացման գերակայություններին համաձայն պետական քաղաքականության իրականացմանը», կարևորել է «բյուջետային ծախսերի ժամանակային, տարածական և բովանդակային կողմերը հաշվի առնելը» [էջ 72]:

Աատենախոսը, որպես ելակետ ընդունելով ծախսերի վերահսկման գաղափարախոսությունից դեպի արդյունքների կառավարման գաղափարախոսություն անցումը, և այդ խորապատկերին, որպես «բյուջետային ծախսերի արդյունավետության ապահովման պայմաններից մեկը դիտարկելով դրանց պլանավորումը, շեշտադրում է բյուջեի կազմման փուլում ակնկալվող արդյունքների, ծախսերի սոցիալ-տնտեսական վերջնարդյունքի հստակ սահմանումը» [էջ 72]: Նկատելով, որ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայություններին համահունչ բյուջետային միջոցների հատկացման ընթացակարգերի և մեխանիզմների բացակայությունը նվազեցնում են «ընդհանուր բյուջետային գործընթացի արդյունավետությունը», որպես խնդրի լուծում, ատենախոսն առաջարկում է կիրառել համակարգային՝ 6-փուլանի մոտեցում, այդպիսով հանգելով բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունն ապահովող համակարգի ձևավորման գաղափարին [էջ 73, 74]:

Նկատելով, որ «գոյություն չունի ծախսերի գնահատման մեթոդաբանություն» [էջ 84], ատենախոսը փորձ է արել ներկայացնել մեթոդաբանական որոշ մոտեցումներ: Մասնավորապես, նախ առաջարկվել է ծախսերի արդյունավետության գնահատման հաջորդական քայլերի շրջանակը [էջ 86,87], այնուհետև դիտարկվել է կատարված ծախսերի և ստացված արդյունքների (պլանային ցուցանիշներ) հնարավոր 4 իրավիճակ [էջ 89]: Միաժամանակ, ծախսերի արդյունավետության գնահատման շրջանակներում առանձնացվել են վերլուծության ենթակա ցուցանիշները, կարևորվել դրանց համադրումը ծախսերի հետ [էջ 90]:

Ելնելով ավանդական նորդասական տնտեսագիտության դրույթներից, բյուջետային ծախսերի արդյունավետության համատեքստում, ատենախոսը կատարելապես ռացիոնալ գործակալների տնտեսական վարքագծի պրիզմայով է դիտարկում դրանց հիմնավորվածությունը, այդ առնչությամբ մանրազնին վերլուծելով նման վարքագիծը պայմանավորող գործոնները [էջ 93]: Այնուհետև, ատենախոսը համակարգված ներկայացնում է ծախսերի հիմնավորվածության ապահովման, իր կողմից նույնականացված, հիմնախնդիրները [էջ 95, 96], դրանց հաղթահարման միջոցառումների շրջանակը [էջ 97, 98] և բյուջետային ընթացակարգերի հաջորդականությունը [էջ 98]:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բյուջետային քաղաքականության կատարելագործման քաղաքականության վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել «Օրենսդիր և գործնական մարմինների կողմից՝ տնտեսական զարգացման, գործարար միջավայրի բարելավման և բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում: Հետազոտության որոշ արդյունքներ կարող են կիրառվել բյուջետային գործընթացների արդյունավետության բարձրացման, պետական ծախսերի արդյունավետության գնահատման նպատակով, ինչպես նաև հիմք հանդիսանալ բնագավառին առնչվող հետագա հետազոտությունների համար:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Նորույթի կատարված հետազոտությանը համարժեք չի կարող համարվել: Կասկածահարույց է առաջին դրույթը որպես նորույթ դիտարկելը: Մյուս նորույթները վերաձևակերպման կարիք են զգում: Աշխատանքի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ որպես նորույթ կարող է ներկայացվել հետևյալ.
 - 1) նույնականացվել են բյուջետավորման քաղաքականության օրենսդրաիրավական, ինստիտուցիոնալ և ընթացակարգային հիմնախնդիրները.
 - 2) բյուջետային գործընթացի արդյունավետության աստիճանը բարձրացնելու նպատակով առաջարկվել է կիրառել համակարգային՝ 6-փուլանի մոտեցում, այդ համատեքստում բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունն ապահովող համակարգի ձևավորմամբ հանդերձ.

- 3) առաջարկվել է պետական ծախսերի արդյունավետության ապահովման սկզբունքային շրջանակ և ծախսերի արդյունավետության գնահատման մեթոդաբանություն, ինչը ենթադրում է հաջորդական քայլերի իրականացում և ծախսերի ու արդյունքների համադրման չորս իրավիճակների դիտարկում:
2. Աշխատանքի 48-րդ էջում, թեպետ ատենախոսը բացահայտել է, որ ծրագրահենք բյուջետավորման գործընթացները դեռևս չեն հանգեցրել ակնկալվող արդյունքների, սակայն չի փորձել իր իսկ առաջարկած մեթոդաբանությամբ [3.2] հիմնավորել այդ պնդումը, ինչի վերաբերյալ որոշ դիտարկումների հնարավոր է հանդիպել արտասահմանյան աղբյուրներում: Օրինակ, Համաշխարհային բանկի 2023 թ. զեկույցում (Armenia Public Expenditure Review: Improving Spending Efficiency. Washington, World Bank, October 2023, էջ 72) նշված է 2022 թ. ՀՀ պետական բյուջեի հավելվածում թվարկված ավելի քան 170 ծրագրերի ու նաև այս առնչությամբ գլոբալ դասերի մասին, որոնք կարող են օգտակար լինել Հայաստանի համար: Ենթադրաբար՝ այդպիսի գնահատման կարք է զգում նաև այն, թե որքանով է արդարացված ՀՀ կառավարության որոշումը՝ 2027 թվականից սկսած հիփոթեքային տոկոսների՝ եկամտահարկի չափով վերադարձի մեխանիզմի գործադրման դադարեցումը մի շարք մարզերում, իսկ 2029-ի հունվարի 1-ից՝ բոլոր մարզերում:
3. Անհասկանալի է աշխատանքի 50-րդ էջում աղյուսակ 2-ի և 51-րդ էջում գծապատկեր 1-ի իմաստը. ՀՆԱ-ի դինամիկան կամ տնտեսական աճի տեմպն առանց բյուջեի ցուցանիշների հետ համադրման, ինչն արվել է հետագայում (աղյուսակ 3 և գծապատկեր 2): Այս առումով, գիտագործնական հետքորքություն կարող էր ներկայացնել, օրինակ, 2008 թ. տնտեսական ճգնաժամով կամ Covid 19-ով պայմանավորված տնտեսական անկման ժամանակահատվածներում պետական ծախսերի դիտարկումը. ՀՆԱ-ի նկատմամբ դրանց մակարդակի, ինչպես նաև կառուցվածքի փոփոխությունները:
4. Աշխատանքի 77-րդ էջում ատենախոսը նշում է. «Բյուջետային ծախսերի տնտեսական էֆեկտը կարող է ստացվել ինչպես բյուջետային ոլորտում (լրացուցիչ բյուջետային եկամուտներ, բյուջետային միջոցների տնտեսում), այնպես էլ նյութական արտադրության, ոչ արտադրողական և անձնական սպառման ոլորտներում»: Այնուհետև, նշվում է, որ տնտեսական էֆեկտը պետք է ունենա դրամական արտահայտություն. 1) նյութական արտադրության ոլորտում՝ ՀՆԱ-ի աճը, շահույթի և եկամուտների աճը և ծախսերի նվազեցումը, 2) ոչ արտադրողական ոլորտում՝ աշխատանքների իրականացման և ծառայությունների մատուցման գծով միջոցների տնտեսումը, 3) անձնական սպառման ոլորտում՝ բնակչության եկամուտների աճը կամ անձնական ծախսերի նվազեցումը: Մինչդեռ, ռեզիդենտ ինստիտուցիոնալ միավորները, որոնք միասին կազմում են երկրի տնտեսությունը, խմբավորվում են հինգ՝ միմյանց բացառող ինստիտուցիոնալ հատվածներում, որոնք էլ ներկայացված են ազգային հաշիվներում. 1) ոչ

Ֆինանսական կազմակերպություններ, 2) ֆինանսական կազմակերպությունների, 3) պետական կառավարման մարմիններ, 4) տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ, 5) տնային տնտեսություններ: Ավելին՝ նշված հաշիվներում առկա են հստակ եզրույթներ. «Համախառն տնօրինվող եկամուտ», «Վերջնական սպառման ծախսեր», «Համախառն խնայողություն»: Ըստ էության, բյուջետային ծախսերը, ուղղակի, թե անուղղակի, ազդում են բոլոր հատվածների վրա: Հետևաբար՝ ատենախոսի կողմից «եկամուտների աճ», «ծախսերի նվազեցում», «միջոցների տնտեսում» հասկացությունների օգտագործումն այլ համատեքստերում, գուցե, ընկալելի լիներ, սակայն, այն, ինչն իրականում նկատի է ունեցել ատենախոսը, պետք է արտահայտվեր ազգային հաշիվներում նշված հասկացությունների միջոցով: Կարող է լինել, օրինակ, «տնային տնտեսությունների վերջնական ծախսերի նվազեցում», «տնային տնտեսությունների խնայողությունների ավելացում» և այլն: Թեև, այստեղ էլ կարևոր է դրսևորել զգուշավոր մոտեցում. տնային տնտեսությունների վերջնական ծախսերի նվազեցումը, արդյոք, չի նշանակի բնակչության ընդհանուր բարեկեցության անկում: Կարևորը համատեքստն է: Օրինակ, Covid 19-ի հաղթահարման համար հատկացվեցին ինչպես բյուջետային, այնպես էլ արտաքին աղբյուրներից ներգրավված միջոցներ, մինչդեռ տնային տնտեսությունների 2019 թ. վերջնական սպառման ծախսերը 40 %-ով գերազանցել են տնօրինվող եկամուտները: Կարելի է ենթադրել, որ այս մասով բյուջետային ծախսերը կամ անբավարար են եղել կամ արդյունավետ չեն օգտագործվել:

5. Աշխատանքի 90 էջում, անդրադառնալով բյուջետային ծախսերի գնահատման ժամանակ անհրաժեշտ վերլուծություններին, ատենախոսը նկատում է. «Կատարված բյուջետային ծախսերի արդյունքում ստացված բյուջետային լրացուցիչ մուտքերի և բյուջետային ծախսերի համադրում: Այս մեթոդի կիրառումը բյուջեի սոցիալական ուղղվածության ծախսերի մասով սահմանափակ է, քանի որ բյուջետային շատ ծախսերի իրականացումը պայմանավորված է սոցիալական խնդիրների լուծմամբ և չի հանգեցնում լրացուցիչ բյուջետային մուտքերի»: Այս պնդումը վիճահարույց է, նկատի ունենալով այն, որ, ի վերջո, պետական ծախսերը, ուղղակի, թե՛ անուղղակի հանգեցնում են ՀՆԱ-ի, հետևաբար՝ նաև պետական եկամուտների աճին: Օրինակ, կենսաթոշակն անկանխիկ ծախսելու դեպքում 10 %-ով ավելացումը որոշակի լրացուցիչ մուտքեր է ապահովում պետական բյուջե, ինչպես որ եկամտային հարկի վերադարձը հիպոթեքային վարկի տոկոսները մարելու համար. շինարարության ծավալների աճը կհանգեցնի լրացուցիչ մուտքերի: Ավելին՝ հատկապես գործնական մեծ նշանակություն կարող է ունենալ սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման արդյունավետության գնահատումը՝ տարածական զարգացման հիմնախնդիրների լուծման տեսանկյունից:

6. Աշխատանքի 3.2՝ «Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնական մոտեցումները» մասի բովանդակությանն ավելի համարժեք վերնագիրը կարող էր լինել «Բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման մեթոդաբանական հնարավոր մոտեցումներ»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները, այդուհանդերձ, չեն նվազեցնում հետազոտությամբ ստացված արդյունքների արժանիքները: Ատենախոսության հիմնական արդյունքները ամփոփվել են 6 գիտական աշխատանքներում, որոնք հրատարակվել ԲԿԳԿ-ի սահմանած ցուցակում ընդգրկված գիտական հրատարակությունում:

Սեղմագիրը և հրատարակված աշխատանքները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը, բնութագրում են կատարված հետազոտության արդյունքները: Ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությանը: Աշխատանքը համապատասխանում է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող պահանջներին, հանդիսանում է ավարտուն հետազոտություն:

Անի Արթուրի Աղաբաբյանի՝ «Բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը բավարարում «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգ»-ի 6-րդ և 7-րդ կետերի չափանիշներին. կարող է գնահատվել իբրև տնտեսագիտության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում և կիրառական կարևոր խնդրի լուծումն ապահովող գիտականորեն հիմնավորված տնտեսական մշակում: Ատենախոսն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գ. Ի. Վարդանյան

13 հունվարի, 2025 թ.

Պրոֆեսոր Գ. Ի. Վարդանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական խորհրդի քարտուղար



Մ. Վ. Հովհաննիսյան

01. _____ 2025 թ.

Գ. Ի. Վարդանյան

13 հունվարի, 2025 թ.